Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 25

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ
(ծածկագիր՝ 2.1-1)

ա) իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի և բյուջեի նախագծի և դրանցում կատարվող փոփոխությունների կազմումը, հաշվետվությունների ստուգումը, ամփոփումը և ներկայացումը,
բ) կազմակերպում է համայնքին վերաբերվող ֆինանսատնտեսական գործը, այդ թվում համայնքի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորումը, բյուջետային հայտերի և ծախսերի պլանավորումը, բյուջետային հայտերի և ծախսային նախահաշիվների կազմումը և ներկայացումը, իրականացնում է համայնքի ֆինանսական գործունեության ժամկետային վերլուծություններ,
գ) սահմանված կարգով ներկայացնում է տարեկան և եռամսյակային հաշվետվություններ,
դ) առաջարկություններ է ներկայացնում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ,
ե) առաջարկություններ է ներկայացնում համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ,
զ) իրականացնում է տարեկան գույքագրումներ և ամփոփումներ,
է) ստորագրում է իր կազմած ֆինանսական փաստաթղթերը,
ը) անհրաժեշտության դեպքում , իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
թ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ,

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Ունի բարձրագույն կրթություն, տնտեսագետի, ֆինանսիստի կամ հաշվապահի մասնագիտություն ,համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում,
բ) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>>,

<<Գնումների մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Եկամտահարկի մասին>>, <<Հարկերի մասին>>, <<Հողի հարկի արտոնությունների մասին>>, ՀՀ օրենքների, հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն,

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն,

ե) իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի հունվարի 27-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010 515131):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության աշխատակազմ